Առցանց իրավունքներ

Սպառողի իրազեկում

Էլեկտրոնային առևտրի կայքերում խելամտորեն նավարկելու համար սպառողները պետք է հասկանան, ինչպես ստուգել կայքի արժանահավատությունը և նվազագույնը բացահայտել անձնական տվյալները:

- Մենք հաճախ ստանում ենք մրցանակ շահելու առաջարկներով գայթակղիչ նամակներ, որոնք «չափազանց լավն են բաց թողնելու համար»:
- Դասարանում ցույց տվեք ֆիշինգի մի քանի օրինակներ և հիշեցրեք սովորողներին, որ երբեք չբացեն նման նամակները, անգամ եթե թվում է՝ դրանք ընկերներից կամ ընտանիքի անդամներից են: Ավելի լավ է հիմա լինել ապահով, քան հետո զղջալ:

Կրթենք սովորողներին պաշտպանել իրենց և ուրիշների անձնական կյանքի գաղտնիությունը

Թվային քաղաքացիական կրթության մասին Եվրոպայի խորհրդի այլ հրապարակումներ

- Educating for a video game culture – A map for teachers and parents (2021)
- Digital citizenship education - Trainers' Pack (2020)
- Digital Citizenship Education – Lesson plans for educators available at https://www.coe.int/en/web/education/new-materials
- Digital Citizenship Education Handbook (2019)
- Bullying: perspectives, practice and insights (2017)
- Internet Literacy Handbook (2017)

Լրացուցիչ տեղեկությունները կարող եք գտնել այստեղ՝
www.coe.int/education

Պաշտպանենք ենք անձնական կյանքի և տվյալների գաղտնիությունը

Կրթենք սովորողներին պաշտպանել իրենց և ուրիշների անձնական կյանքի գաղտնիությունը

Հեղինակներ՝
Janice Richardson
Veronica Samara

Հատուկ շնորհակալություն Պասկալ Սերիերին

Safe.am

PREMS 038123

HYE

Ուսուցիչներին

www.coe.int

Եվրոպայի խորհուրդն առաջատարն է մայրցամաքում մարդու իրավունքներով զբաղվող կազմակերպությունների շարքում: Եվրոպայի խորհրդին անդամակցում են 46 պետություններ, այդ թվում՝ Եվրոպական միության բոլոր անդամ պետությունները: Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր պետությունները միացել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային՝ որպես մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության պաշտպանությանը միտված միջազգային պայմանագրի: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է Կոնվենցիայի իրագործումն անդամ պետություններում:

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

EDUCATION FOR DEMOCRACY

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Լինել առցանց

Հասանելիություն և ներառում

Երեխաները համացանցում իրավունք ունեն լինել ապահով, և նրանց անձնական տվյալների գաղտնիությունը պետք է պաշտպանվի:

- Համոզվեք, որ սովորողներն օգտագործում են միայն դպրոցի կողմից թույլատրված թվային գործիքներ և հարթակներ:
- Մի՛ նկարեք և մի՛ տարածեք սովորողների լուսանկարները և տեսանյութերը՝ առանց ծնողների նախապես տրամադրված գրավոր համաձայնության: Տարիքը ներելու դեպքում համաձայնությունը կարող են տրամադրել սովորողները:

Ուսուցում և ստեղծունակություն

Երեխաները պետք է կարողանան օգտագործել համացանցը ստեղծագործաբար և չխաթարեն իրենց անձնական կյանքի գաղտնիությունը՝ պահանջվածից ավել անձնական տվյալներ չտրամադրելով:

- Get your students to create a picture, drawing, or text for the school blog.
- Before publishing their creations, help them set up a checklist to be sure they are not giving away any private data.

Մեդիա և տեղեկատվական գրագիտություն

Մեդիա և տեղեկատվական գրագիտությունը ենթադրում է անձնական տեղեկությունների մասին իմացություն և առցանց տեխնոլոգիաներից օգտվելու գիտելիք՝ ինչպես չխաթարել անձնական կյանքի գաղտնիությունը:

- Սովորողների հետ քննարկեք անձնական, «զգայուն» տվյալների նշանակությունը:
- Արդյո՞ք նրանք գիտեն ինչ անձնական տվյալներ են թողնում, երբ բացում են հաշիվներ՝ իրենց նախընտրած հարթակներից օգտվելու համար:

Լինել ապահով առցանց

Էթիկա և Էմպաթիա

Անձնական տվյալների պաշտպանությունը ենթադրում է մեզ հետ հաղորդակցվող մարդկանց անձնական կյանքի գաղտնիությունը՝ ցանցում և ցանցից դուրս:

- Քննարկեք սովորողների հետ համացանցային էթիկայի կարևորությունը. լինել արդարացի և հետևել էթիկային, հարգել այլ մարդկանց և նրանց անձնական կյանքի գաղտնիությունը:

Առողջություն և բարօրություն

Երբ հարթակները և ընկերությունները հավաքագրում են մեր անձնական տվյալները, օգտատերերը իրավունք ունեն իմանալու ինչպես են օգտագործվում իրենց տվյալները: Մենք իրավունք ունենք պահանջելու մեր անձնական տվյալների հեռացումը, երբ դրանք այլևս չեն ծառայում իրենց հավաքագրման նպատակին, կամ ապօրինի են օգտագործվում:

- Համոզվեք, որ դպրոցի սովորողների և անձնակազմի բոլոր անձնական տվյալները մշակվում են տվյալների պաշտպանության մասին սահմանված կարգի համաձայն:
- Տվյալների անիրավազոր մատչելիությունը կամ արտահոսքը կարող են վտանգել աշակերտների և անձնակազմի անձնական կյանքի գաղտնիությունն ու բարեկեցությունը:

Էլեկտրոնային ներկայություն և հաղորդակցություն

Կարևոր է, որ երեխաները սովորեն համացանցում առողջ վարվելակերպ և իմանան, որ անձնական տվյալները նրանք պետք է պաշտպանեն առցանց գործողությունների և հաղորդակցման ժամանակ:

- «Մտածեք նախքան հրապարակելը». քննարկեք սովորողների հետ, թե իրականում ինչ է սա նշանակում:
- Այն, ինչ մենք հրապարակում ենք համացանցում, կարող է հասանելի լինել և չարաշահվել յուրականչյուր մարդու կողմից, ուստի մենք պետք է շատ զգույշ լինենք, որպեսզի չբացահայտենք մեր և ուրիշների մասին անձնական տեղեկություններ:

Առցանց իրավունքներ

Ակտիվ մասնակցություն

*Երեխաները **տարիքին և հասունության մակարդակին** համապատասխան պետք է տեղեկացված լինեն գաղտնիության իրավունքների մասին: Երեխաների՝ իրավունքներն իրացնելու և ինքնուրույն գործելու կարողությունը չի գերազանցում ծնողների՝ երեխայի անունից նույն իրավունքները պաշտպանելը և աջակցություն ցուցաբերելը:*

- **Քո ասելիքը:** Հանձնարարեք աշակերտներին խոսել այն մասին, թե ինչպես կարող են պաշտպանել իրենց գաղտնիությունը, տվյալները և առցանց իրավունքները:
- Հանձնարարեք նրանց ստեղծել զվարճալի մեմեր կամ պաստառներ անձնական տվյալների պաշտպանության մասին և փակցնել իրենց ստեղծագործությունները դասարանի կամ դպրոցի պատին:

Իրավունքներ և պարտականություններ

Քանի որ երիտասարդները առցանց տեխնոլոգիաների ամենաշատ օգտագործողներն են ու արագ են վարժվում, պետք է խրախուսել նրանց արտահայտել իրենց կարծիքը առցանց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ: Ի՞նչ գիտեն և ի՞նչ են մտածում GDPR-ի (Տվյալների պաշտպանության ընդհանուր կանոնակարգի) մասին:

- Դպրոցները պարտավոր են գործել GDPR-ի համապատասխան և սովորեցնել աշակերտներին, թե ինչ է այն նշանակում:
- Դպրոցի անձնակազմի կամ ավագ դպրոցականների հետ ստեղծեք երեխաների համար պաստառ՝ GDPR-ով սահմանված իրավունքների և պարտականությունների մասին: Քննարկեք թեման դասարանում և ցուցադրեք պաստառը դպրոցի մի հասանելի վայրում:

Գաղտնիություն և անվտանգություն

Երեխաները պետք է սովորեն զգույշ լինել, երբ առցանց կամ անցանց ծառայություններն իրենցից անձնական տվյալներ են հայցում:

- Տեղեկացեք դպրոցի գաղտնիության քաղաքականության մասին և համոզվեք, որ սովորողների անձնական տվյալների նկատմամբ վնասակար հարձակումները և տվյալների արտահոսքը կանխելու համար անվտանգության ճիշտ միջոցներ եք ձեռնարկել: